# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/134 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29.09.2021թ.

24.09.2021-29.09.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/134 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Մելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետ, |
| Ս. Բադալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ջ. Դիլանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի Կոմպլեքսային վերանորոգման արտադրամասի ավագ վարպետ 1-ին խմբի, |
| Ռ. Կոգանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ավագ ապրանքագետ-պահեստապետ, |
| Գ. Գասպարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ինժեներ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Մելյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի սեպտեմբերի 24-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Էլ. հաղորդալար էկրանավորված МКЭШ 3x0.35մմ² | 80000 |
| 2 | Էլ. հաղորդալար էկրանավորված МКЭШ2x0.35մմ² | 60000 |
| 3 | Պտուտակ 6x35մմ | 3750 |
| 4 | Պտուտակ 5x40մմ | 2500 |
| 5 | Պտուտակ 5x45մմ | 2500 |
| 6 | Պտուտակ 6x45մմ | 3750 |
| 7 | Պտուտակ 6x50մմ | 3750 |
| 8 | Պտուտակ 4x35մմ | 2500 |
| 9 | Պտուտակ 4x16մմ | 2500 |
| 10 | Պտուտակ 4x14մմ | 2500 |
| 11 | Շրիշակ | 120000 |
| 12 | Ալյումինե շեմ 30մմ | 50000 |
| 13 | Ներկ հակակոռոզիոն | 36000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | Էլ. հասցե |
| 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | 02286211 | ՀՀ, ք. Երևան, Շահումյան 5 փ. 19 տուն | +(374)44989899 | profshin2020@gmail.com |
| 2 | «ԲԻՓԻՕ» ՍՊԸ | 00497604 | ՀՀ, ք. Երևան, Արցախի փողոց, 18 շենք, 92 բնակարան | +37455741153 | bpotoyou@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «ԲԻՓԻՕ» ՍՊԸ-ի. Վերջինիս կողմից հայտով չի ներկայացվել Հավելված 2-ը՝ գնային առաջարկը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ ներքոնշյալ մասնակիցների.

1. «ԲԻՓԻՕ» ՍՊԸ - Վերջինիս կողմից հայտով չի ներկայացվել Հավելված 2-ը՝ գնային առաջարկը:
2. «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ - սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը պետք է փոխարինվեին «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով: Հավելված 1.3-ի 4.7 (Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները) և 4.8 (Իրական շահառուի կոնտակտային տվյալները) բաժինները լրացված չեն:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Էլ. հաղորդալար էկրանավորված МКЭШ 3x0.35մմ2 | «ԲԻՓԻՕ» ՍՊԸ | 80,000.00 | | | |
| 2 | Էլ. հաղորդալար էկրանավորված МКЭШ2x0.35մմ2 | «ԲԻՓԻՕ» ՍՊԸ | 60,000.00 | | | |
| 3 | Պտուտակ 6x35մմ | | 3,750.00 | | | |
| 4 | Պտուտակ 5x40մմ | | 2,500.00 | | | |
| 5 | Պտուտակ 5x45մմ | | 2,500.00 | | | |
| 6 | Պտուտակ 6x45մմ | | 3,750.00 | | | |
| 7 | Պտուտակ 6x50մմ | | 3,750.00 | | | |
| 8 | Պտուտակ 4x35մմ | | 2,500.00 | | | |
| 9 | Պտուտակ 4x16մմ | | 2,500.00 | | | |
| 10 | Պտուտակ 4x14մմ | | 2,500.00 | | | |
| 11 | Շրիշակ | «Պրոֆշին 2020» ՍՊԸ | 120,000.00 | 100,000.00 | 20,000.00 | 120,000.00 |
| 12 | Այումինե շեմ 30մմ | | 50,000.00 | | | |
| 13 | Ներկ հակակոռոզիոն | «ԲԻՓԻՕ» ՍՊԸ | 36,000.00 | | | |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «Պրոֆշին 2020» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նոր Հավելված 1.1 և Հավելված 1.3:
   Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. 3-10, 12 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները:

3. «ԲԻՓԻՕ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

5. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 11 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | բավարար |
| 1, 2, 13 | «ԲԻՓԻՕ» ՍՊԸ | անբավարար |

7. 1, 2, 13 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

8. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափա բաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրա ծ տեղ | Անվանում | | |
| 11 | 1 | «ՊՐՈՖՇԻՆ 2020» ՍՊԸ | X | 100,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. Անգործության ժամկետ չսահմանել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Մելյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Բադալյան

Ջ. Դիլանյան

Ռ. Կոգանյան

Գ. Գասպարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մ. Ղազարյան